

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՅԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	3
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	7
4. ՓՈԽԱՐԺԵՔ	8
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	9
5.1. Բյուջեի եկամուտները	9
5.2. Բյուջեի ծախսերը	11
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	12
5.4. Պետական պարտք	12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	13
6.1. Գնաճ	13
6.2. Ավանդներ	14
6.3. Վարկեր	15
6.4. Դրամական փոխանցումներ	18
7. ԱՄՓՈՓՈՒՄ	18

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ


2022 թվականի արտաքին շուկերի դրական ազդեցությունների պայմաններում ՀՀ տնտեսական ակտիվությունը 2023թ. սկզբից աճում է բավական բարձր տեմպերով: Բարձր աճերը շարունակվել են նաև մայիսին՝ չնայած այն հանգամանքին, որ նախորդ տարվա մայիս ամիսն արդեն իսկ իր մեջ կրում էր արտաժին դրական զարգացումների ազդեցությունը, ինչն այլ հավասար պայմաններում պետք է հանգեցներ աճի տեմպի դանդաղմանը (այս երևույթը հաճախ անվանվում է բազայի էֆեկտ): Այսպես, մայիսին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է 13.7%՝ ապրիլի համեմատ արագանալով 1.6 տոկոսային կետով, այն դեպքում, երբ նախորդ տարվա մայիսին ՏԱՑ-ը նույնպես արագացել էր՝ 4.3 տոկոսային կետով: Արդյունքում հունվար-մայիս ամիսների ՏԱՑ-ը նույնպես արագացել է՝ կազմելով 12.5%, հունվար-ապրիլի համեմատ արագանալով 0.3 տոկոսային կետով:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




2023թ. հունվար-մայիս ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի և ծառայությունների աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր ՏԱՑ-ի աճին կազմել են 9.6 և 4.6 տոկոսային կետ: Շինարարության ճյուղն էականորեն ավելի փոքր նպաստում է ունեցել՝ շուրջ 0.8 տոկոսային կետ, իսկ արդյունաբերության նպաստումը մեծացել է նախորդ ամսվա համեմատ՝ կազմելով 0.7 տոկոսային կետ:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2023թ. հունվար-մայիս ամիսներին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտում գրանցվել է աճի արագացում: Նախորդ ամսվա անկումից հետո մայիսին արդյունաբերության ոլորտում գրանցվել է 5.3% աճ: Արդյունքում արդյունաբերության կուտակային աճի տեմպն արագացել է 0.6 տոկոսային կետով՝ հասնելով 3.0%-ի: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ արդյունաբերության աճն էապես ցածր է մնում տնտեսության աճից:


Արդյունաբերության հունվար-ապրիլ¹ ամիսների 2.4% աճը հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության շուրջ 5.9% աճով, որի

¹ Արդյունաբերության մայիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

նպաստումը կազմել է 3.3 տոկոսային կետ: Ընդ որում, մշակող արդյունաբերության աճի տեմպը դանդաղել է նախորդ ամսվա 8.1%-ի համեմատ: Հանքարդյունաբերության ոլորտում հունվար-ապրիլ ամիսներին շարունակվել են անկման միտումները, որի չափը կազմել է 4.0% (նախորդ ամսվա անկումը՝ 3.2%) և ընդհանուր արդյունաբերության աճին հակազդել է 1.0 տոկոսային կետով: «Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտում գրանցվել է զրոյական աճ, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ոլորտում գրանցվել է 10.6% աճ՝ արդյունաբերության աճին նպաստելով 0.1 տոկոսային կետով:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը², %




Շինարարության աճը շարունակում է բարձր մնալ, սակայն մայիսին նկատվել է որոշակի դանդաղում: Շինարարության աճն ընթացիկ տարվա մայիսին կազմել է 18.4%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.9 տոկոսային կետով: Սակայն, կուտակային՝ հունվար-մայիս ամիսների աճը շարունակել է արագանալ՝ կազմելով 16.7%՝ հունվար-ապրիլի 16.1%-ի դիմաց:

² Շինարարության մարտ ամսվա աճի ցուցանիշը վերանայվել է ՀՀ ՎԿ կողմից՝ նախկինում հրապարակված 19.0%-ից դառնալով 16.6%, ինչի արդյունքում վերանայվել են նաև հունվար-մարտ և հունվար-ապրիլ ամիսների կուտակային աճի ցուցանիշները:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների ոլորտի աճը, իր վրա կրելով բազայի էֆեկտի ազդեցությունները, վերջին ամիսներին շարունակաբար դանդաղում է: Ծառայությունների ոլորտում մայիսին գրանցվել է 12.3% աճ, որը, սակայն, էապես՝ շուրջ 8.1 տոկոսային կետով, դանդաղել է նախորդ ամսվա համեմատ: Կուտակային աճը նույնպես դանդաղել է՝ հունվար-մայիսին կազմելով 19.9% և հունվար-ապրիլի համեմատ դանդաղելով 2.3 տոկոսային կետով:

Ծառայությունների ոլորտում, ըստ հունվար-ապրիլ ամիսների տվյալների³, բարձր աճին մեծամասամբ՝ 10.5 տոկոսային կետով նպաստել է «տեղեկատվություն և կապ» ենթաոլորտի շուրջ 58.0% աճը: Էական նպաստում են ունեցել նաև «տրանսպորտ», «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» և «կաջություն և հանրային սնունդ» ենթաոլորտների աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.0, 3.6 և 2.3 տոկոսային կետ:

³ Ծառայությունների ոլորտի մայիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի աճի տեմպերը շարունակել են մնալ բարձր մակարդակում: Արտաքին զարգացումների դրական տնտեսական հետևանքներն առևտրի վրա շարունակում են պահպանվել, ինչի արդյունքում մայիսին առևտրի ռոտորում շարունակվել է գրանցվել բավական բարձր տնտեսական ակտիվության աճ՝ շուրջ 28.6%: Կուտակային աճը շարունակել է աճել. հունվար-մայիս ամիսների աճը կազմել է 24.5%՝ արագանալով 1.3 տոկոսային կետով:

2. ԱՐՏԱԲԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ⁴, %




⁴ Արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից, ինչի արդյունքում աճի տեմպերն արագացել են նախկինում հրապարակվածի համեմատ:

Արտահանման աճի տեմպը շարունակել է դանդաղել՝ որոշակիորեն պայմանավորված լինելով բազայի էֆեկտով: 2023թ. մայիսին արտահանման ծավալների աճը կազմել է 47.6%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 33.9 տոկոսային կետով: Աճի տեմպի դանդաղման պատճառներից է նաև նախորդ տարվա աճող բազայի ազդեցությունը, որը, սակայն, այդ դանդաղման միակ պատճառը չէ. համեմատվող բազայի աճի արագացումը նախորդ տարի բացարձակ արժեքով ավելի փոքր էր՝ կազմում էր 12 տոկոսային կետ: Հունվար-մայիս ամիսների աճի ցուցանիշը ևս դանդաղել է՝ կազմելով 93.3%՝ հունվար-ապրիլի 109.8%-դիմաց: Այնուամենայնիվ, արտահանման աճի տեմպը դեռևս բավական բարձր է:

2023թ. հունվար-ապրիլ ամիսների⁵ արտահանման աճը հիմնականում պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի համապատասխանաբար 3.9, 15.0 և 18.2 անգամ աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր արտահանմանը կազմել են համապատասխանաբար 36.6, 33.4 և 20.7 տոկոսային կետ:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ⁶, %



Ներմուծման աճի տեմպը նույնպես էականորեն դանդաղել է, որի դեպքում, սակայն, բազայի ազդեցությունը ավելի մեծ դեր ունի: Ներմուծման ծավալները 2023թ. մայիսին աճել են շուրջ 52.1%-ով, այն դեպքում, երբ նախորդ ամսվա աճը

⁵ Արտաքին առևտրի մայիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

⁶ Ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից, ինչի արդյունքում ներմուծման աճի տեմպերն արագացել են նախկինում հրապարակվածի համեմատ:

կազմել էր շուրջ 85.5%: Սակայն, ի տարբերություն արտահանման, այստեղ բազայի ազդեցությունն ավելի մեծ է՝ շուրջ 30.8 տոկոսային կետ:

Ներմուծման աճը 2023թ. հունվար-ապրիլ ամիսներին⁷ հիմնականում պայմանավորված է եղել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի ներմուծման բարձր աճերով, որոնք ընդհանուր ներմուծման աճին նպաստել են համապատասխանաբար 30.1, 27.0 և 18.8 տոկոսային կետով: Այս նույն ապրանքները նաև նպաստել էին արտահանման աճին, ինչը խոսում է վերարտահանման երկույթի շարունակականության մասին:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ⁸


Անվանական աշխատավարձի աճի տեմպը բարձր է: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2023 թվականի հունվար-ապրիլ ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 21.6%-ով՝ կազմելով 260,042.0 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 25.0%-ով՝ կազմելով 289,959.0 դրամ: Սակայն պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է զգալիորեն ավելի ցածր՝ 8.7% տեմպով և կազմել 189,028.0 դրամ: Հարկ է նշել, սակայն, որ թեև աշխատավարձերի աճը պահպանվում է բավական բարձր մակարդակում, աճի տեմպը ապրիլին (նախորդ տարվա նույն ամսվա համեմատ) նվազել է ընդհանուր տնտեսությունում՝ կազմելով 17.9%՝ մարտի 25.3%-ի փոխարեն, իսկ մասնավոր հատվածում՝ 20.3%՝ մարտի 28.9%-ի փոխարեն:

Ապրիլին գնաճը ևս դանդաղել է՝ կազմելով 3.2%, ինչի արդյունքում հունվար-ապրիլ ամիսների միջին գնաճը նույնպես դանդաղել է՝ կազմելով 6.2%՝ նախորդ ամսվա 7.2%-ի դիմաց: Այս պայմաններում միջին ամսական իրական աշխատավարձը աճել է 14.5%-ով, մասնավոր հատվածում՝ 17.7%-ով, իսկ պետական հատվածում՝ 2.4%-ով:

⁷ Արտաքին առևտրի մայիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:


⁸ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, մայիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2022-2023թթ. հունվար-ապրիլին, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)






ՀՀ դրամը հիմնական արժույթների նկատմամբ շարունակում է մնալ էապես արժևորված: Հունվար-մայիս ամիսների ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է շուրջ 22.3%-ով, եվրոյի նկատմամբ՝ 24.7%-ով, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 18.3%-ով: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի արժևորման տեմպն արագանում է վերջին ամիսներին՝ պայմանավորված ՌԴ ռուբլու դիրքերի թուլացմամբ: Վերջինս, սակայն, կարող է լրացուցիչ բացասական ազդեցություն ունենալ ՌԴ-ում ՀՀ ապրանքների մրցունակության և դեպի ՌԴ ՀՀ արտադրության ապրանքների արտահանման ծավալների վրա:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճի տեմպը վերջին ամիսներին արագացել է: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2023թ. մայիսին աճել են 18.1%-ով, իսկ հունվար-մայիս ամիսների աճը կազմել է 18.7%, որը, սակայն, ցածր է նախորդ տարվա նույն ամիսների 24.0% աճից: Բյուջեի եկամուտների աճի դանդաղումը պայմանավորված է ինչպես հարկային եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների աճի դանդաղմամբ, այնպես էլ այլ եկամուտների նվազմամբ: Այսպես, այլ եկամուտների աճը հունվար-մայիս ամիսներին կազմել է 0.5%, իսկ պաշտոնական դրամաշնորհները նվազել են 5.0%-ով:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճի տեմպը 2023թ. հունվար-մայիսին կազմել է 19.7%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.3 տոկոսային կետով:

Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է առավել խոշոր հարկատեսակների՝ շահութահարկի (աճը՝ 45.1%), ԱԱՀ-ի (աճը՝ 21.4%) և եկամտային հարկի (աճը՝ 18.7%) աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր հարկային եկամուտների աճին կազմել են համապատասխանաբար 8.5, 6.6 և 4.6 տոկոսային կետ: Հարկային եկամուտների աճին բացասական նպաստում են ունեցել պետական տուրքերի 55.1% և բնապահպանական հարկ և բնօգտագործման վճարի 75.5% նվազումը, որոնք հարկերի աճին հակազդել են համապատասխանաբար 3.4 և 3.2 տոկոսային կետով:


Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2022թ. հունվար-մայիս		2023թ. հունվար-մայիս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	23.2	23.2	19.7	19.7
ԱԱՀ	18.3	5.9	21.4	6.6
Շահութահարկ	55.1	8.2	45.1	8.5
Եկամտային հարկ	6.0	1.7	18.7	4.6
Ակցիզային հարկ	11.9	0.7	29.4	1.5
Շրջանառության հարկ	28.3	0.6	32.4	0.8

Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	61.1	2.0	-75.5	-3.2
Մաքսատուրք	-56.7	-3.1	96.5	1.9
Սոցիալական վճար	43.8	1.2	47.4	1.5
Այլ հարկային եկամուտներ	19.2	0.5	40.5	1.1
Պետական տուրք	251.0	5.5	-55.1	-3.4

5.2. Բյուջեի ծախսերը


Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերը մայիսին բարձր աճ են գրանցել: Ընդհանուր ծախսերի աճը հունվար-մայիս ամիսներին կազմել է 12.7%, որին 11.0 տոկոսային կետով նպաստել է ընթացիկ ծախսերի աճը: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները (որոնք հիմնականում կապիտալ ծախսերն են) աճել են ավելի արագ տեմպով՝ 16.7%-ով՝ ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 1.7 տոկոսային կետով: Սակայն հունվար-մայիս ամիսներին իրականացված կապիտալ ծախսերի ծավալը բավական փոքր է եղել՝ շուրջ 92.7 մլրդ դրամ, այն դեպքում, երբ հունվար-հունիս ամիսների պլանը կազմում է 214.9 մլրդ դրամ: Ավելին, փաստացի իրականացված ծախսերը փոքր են նույնիսկ առաջին եռամսյակի համար նախատեսված 98.1 մլրդ դրամից:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ




Պետական բյուջեի կատարումը շարունակում է շեղված մնալ պլանավորվածից, ինչն արտացոլվում է էապես բարձր հավելուրդների գրանցմամբ: ՀՀ պետական բյուջեի ծախսերն ընթացիկ տարվա հունվար-մայիս ամիսներին ավելի քիչ են եղել, քան եկամուտները, ինչի արդյունքում ձևավորվել է բյուջեի հավելուրդ՝ շուրջ 100.7 մլրդ դրամի չափով՝ նախորդ տարվա 46.3 մլրդ դրամ հավելուրդի և այս տարվա առաջին կիսամյակում ծրագրված 119.1 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Ընդ որում, ծախսերի քիչ լինելը հիմնականում պայմանավորված է կապիտալ ծախսերի նվազմամբ, ինչը նշանակում է, որ կապիտալ ծախսերի կատարողականի հետ կապված խնդիրներն ավելի են խորանում:

5.4. Պետական պարտք

2023թ. մայիսին ՀՀ պետական պարտքի ԱՄՆ դոլարով արտահայտված ծավալի աճը փոքր-ինչ դանդաղել է: ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ աճել է 15.1%-ով, մինչդեռ դրամային արտահայտությամբ ՀՀ պարտքը նվազել է 1.0%-ով: Կառավարության պարտքը նույն միտումներն է ունեցել՝ դոլարային արտահայտությամբ աճել է 15.4%-ով, իսկ դրամային արտահայտությամբ նվազել է 0.8%-ով: Այդպիսի զարգացումների հիմնական պատճառը ՀՀ դրամի արժևորումն է: Հետևաբար, առավել ճիշտ կլինի դիտարկել դրամով արտահայտված ներքին պարտքը, որը մայիսին՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 30.3%-ով, և դոլարային արտահայտությամբ արտաքին պարտքը, որը նվազել է 2.9%-ով: Ներքին պարտքի կշիռը ընդհանուր պարտքի պորտֆելում շարունակել է աճել՝ մայիսի վերջի դրությամբ հասնելով 44.1%-ի:

2023թ. մայիսին պետական պարտատոմսերի տոկոսադրույքները շարունակել են մնալ բարձր մակարդակում: Կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը (եկամտաբերությունը) 2023թ. մայիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ բարձր է եղել շուրջ 1.1 տոկոսային կետով, իսկ միջնաժամկետ պարտատոմսերինը՝ 0.5 տոկոսային կետով:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %




2023թ. մայիսին գնաճի կտրուկ անկումը շարունակվել է: 2023թ. մայիսին 12-ամսյա գնաճը կազմել է 1.3%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.9

տոկոսային կետով: Ի դեպ, ՀՀ ԿԲ-ն վերաֆինանսավորման տոկոսադրույքը հունիսին նվազեցրել է 0.25 տոկոսային կետով:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



2023թ. մայիսին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների բարձր աճի տեմպը որոշակիորեն դանդաղել է: 2023թ. մայիսի վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել է 26.5%-ով՝ ապրիլի համեմատ դանդաղելով 4.7 տոկոսային կետով: Ավանդների ծավալի բարձր աճը պայմանավորված է ինչպես ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների ավանդների աճերով, սակայն վերջիններիս աճի տեմպն էականորեն բարձր է և կազմում է շուրջ 43.1%:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին ոչ ռեզիդենտների ավանդների աճը նպաստել է շուրջ 9.6 տոկոսային կետով: Ռեզիդենտների ավանդների շարքում էական նպաստում են ունեցել տնային տնտեսություններից և ձեռնարկություններից ներգրավված ավանդների աճերը՝ համապատասխանաբար 9.5 և 5.9 տոկոսային կետով:

6.3. Վարկեր


Վարկերի ծավալների աճի տեմպը շարունակել է արագանալ, սակայն ավանդների համեմատ մնացել է ավելի ցածր մակարդակում: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2023թ. մայիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 9.8%-ով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Վարկերի աճը հիմնականում տեղի է ունեցել ռեզիդենտներին տրամադրված վարկերի 10.5% աճի հաշվին, որն ընդհանուր վարկերի աճին նպաստել է 9.9 տոկոսային կետով: Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները նվազել են 2.7%-ով՝ ընդհանուր վարկերի աճին հակազդելով 0.1 տոկոսային կետով:

Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը հիմնականում պայմանավորված է տնային տնտեսությունների վարկերի շուրջ 18.8% աճով: Իրավաբանական անձանց տրամադրված վարկերի ծավալի աճը որոշակիորեն արագացել է՝ կազմելով 3.0%:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ




Ռեզիդենտների⁹ շարքում վարկերի աճին դրական նպաստում են ունեցել հիմնականում հիպոթեքային վարկերը, որոնց աճը կազմել է 30.7%, իսկ նպաստման չափը՝ 5.6 տոկոսային կետ: Վարկերի աճին էական նպաստում է ունեցել նաև սպառողական վարկերի 14.3% աճը՝ ունենալով 3.0 տոկոսային կետ նպաստում: Շինարարության, ծառայությունների և գյուղատնտեսության ոլորտներին տրամադրվող վարկերի ծավալները նույնպես աճել են՝ ընդհանուր վարկերին ունենալով փոքր չափով դրական նպաստում: Արդյունաբերության ոլորտին տրամադրվող վարկերի ծավալը նվազել է 9.7%-ով՝ ընդհանուր վարկերի ծավալին ունենալով 1.3 տոկոսային կետով բացասական նպաստում: Վերջինս նույնպես արտացոլում է արդյունաբերության ոլորտում առկա խնդիրները:

⁹ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը¹⁰



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը կրճատվել է: 2023թ. ապրիլին բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) կազմել է 166.6 մլն ԱՄՆ դոլար՝ էապես ցածր լինելով տարեսկզբի և նախորդ տարվա վերջին ամիսների ցուցանիշներից:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2023թ. տնտեսական աճի բարձր տեմպը պահպանվում է, թեև սպասվում էր, որ բազայի էֆեկտի աստիճանական չեզոքացումը կհանգեցներ աճերի դանդաղման: Նախորդ տարվա արտաքին շուկերի դրական ազդեցությունների պահպանման պայմաններում 2023թ. սկզբից ՀՀ տնտեսական աճի տեմպը բավական բարձր է, ինչը շարունակվել է նաև մայիսին, թեև նախորդ տարվա մայիսից դրական շուկի ազդեցություններն արդեն իսկ սկսել էին արտացոլվել տնտեսական ցուցանիշներում: Այսպես, մայիսին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է 13.7%՝ ապրիլի համեմատ արագանալով 1.6 տոկոսային կետով, այն դեպքում, երբ նախորդ տարվա մայիսին ՏԱՑ-ը նույնպես արագացել էր՝ 4.3 տոկոսային կետով: Արդյունքում հունվար-մայիս ամիսների ՏԱՑ-ը նույնպես արագացել է՝ կազմելով 12.5%, հունվար-ապրիլի համեմատ արագանալով 0.3 տոկոսային կետով:

¹⁰ Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումների տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով:

2. ՏԱՑ-ի արագացմանը զուգընթաց, որոշ ցուցանիշներ սկսել են դրսևորել աճի դանդաղման միտումներ: Տնտեսական ակտիվությունը ծառայությունների ոլորտում, ինչպես նաև արտահանման և ներմուծման ծավալների աճերը դանդաղել են, ինչը հիմնականում պայմանավորված է նրանով, որ նախորդ՝ համեմատվող տարվա ցուցանիշներում արդեն իսկ արտացոլված են դրական շուկի ազդեցությունները: Նշանակում է, որ այս ոլորտներում հնարավոր է աճի դանդաղում նաև հաջորդ ամիսներին:

3. Գնաճի տեմպն էլ ավելի է դանդաղել՝ իջնելով գնաճի թիրախային միջակայքի ստորին սահմանից ներքև: Գնաճի տեմպի այսպիսի արագ դանդաղումը կարող է վնասակար լինել տնտեսության համար՝ թեև դրա հիմնական շարժիչ ուժը ներմուծվող ապրանքների և գյուղատնտեսական արտադրանքի գների նվազումն է: Իրավիճակին ի պատասխան՝ ՀՀ ԿԲ-ն հունիսին արդեն իսկ նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով:

4. Պետական բյուջեի կատարումը շարունակում է խնդրահարույց մնալ: Թեև հունվար-մայիս ամիսների ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները (որոնք հիմնականում կապիտալ ծախսերն են) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 16.7%-ով, դրանց կշիռը փաստացի պլանավորվածի համեմատ էականորեն ցածր է: Հունվար-մայիս ամիսներին իրականացված կապիտալ ծախսերի (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի) ծավալը կազմել է շուրջ 92.7 մլրդ դրամ, այն դեպքում, երբ հունվար-հունիս ամիսների պլանը կազմում է 214.9 մլրդ դրամ: Ավելին, փաստացի իրականացված ծախսերը փոքր են նույնիսկ առաջին եռամսյակի համար նախատեսված 98.1 մլրդ դրամից: Սա ցույց է տալիս, որ կապիտալ ծախսերի կատարողականի բարելավման միտում դեռևս չկա, և առաջիկայում նույնպես արձանագրվելու են էական թերակատարումներ:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: